



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

-- ----- 2017 թվականի №--Ն  
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N30Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեխնիկական նախագծում ընդգրկվող փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» N30Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում «փաստաթղթերի» բառից հետո լրացնել «և տեխնիկական նկարագրում ընդգրկվող տեղեկությունների» բառերը, իսկ «ցանկը» բառը փոխարինել «ցանկերը» բառով.

2) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաստատել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող՝

1) հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեխնիկական նախագծում ընդգրկվող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն N1 հավելվածի,

2) հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեխնիկական նկարագրում ընդգրկվող տեղեկությունների ցանկը՝ համաձայն N2 հավելվածի:».

3) Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) յուրաքանչյուր տարի մինչև հուլիսի 1-ը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել տվյալ տարվան նախորդող տարվա ընթացքում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի կրած բոլոր փոփոխությունները (առկայության դեպքում)՝ տեխնիկական նախագծի կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա ունեցող անձի կողմից մշակված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեխնիկական նկարագրի փոփոխությունների տեսքով:».

4) Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում «Հավելված» բառը փոխարինել «Հավելված N1» բառերով.

5) Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝

ա. 3-րդ կետում «գծապատկերը» բառից հետո լրացնել «և բազային կայանների աշխարհագրական տեղակայման կոորդինատները (ռադիոկապի դեպքում)» բառերը.

բ. 7-րդ կետը լրացնել 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) օգտագործվող սարքավորումների տեխնիկական բնութագրերը (ներառյալ ինտերֆեյսները).

7) սարքավորումների տեղակայման պահարանները (զբաղվածության ծավալները), էլեկտրասնուցման աղբյուրների տեսակները, դրանց հզորությունները և լարումները.

8) օգտագործվող աշտարակների ու կայմերի տեսակները և դրանց զբաղվածության ծավալները.».

6) Որոշումը լրացնել N2 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**